ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

<< 08 >> օգոստոսի 2018թ. N 90

ք. Արմավիր

## ԷԴՈՒԱՐԴ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ, հոդվածով, 161-րդ հոդվածի երկրորդ մասով, 163-րդ և 164-րդ հոդվածով և 169-րդ հոդվածի երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 19-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Արմավիրի արյան փոխներարկման կայան>> պետական փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Էդուարդ Դարբինյանի 2018 թվականի օգոստոսի 1-ի դիմումը.

**կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Արմավիրի արյան փոխներարկման կայան>> պետական փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Էդուարդ Դարբինյանին տրամադրել 2017-2018 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդ չօգտագործած մասը՝ 2018 թվականի օգոստոսի 20-ից սեպտեմբերի 17-ը ներառյալ՝ 21 աշխատանքային օր տևողությամբ:
2. Էդուարդ Դարբինյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում գործադիր տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Արմավիրի արյան փոխներարկման կայան>> պետական փակ բաժնետիրական ընկերության բժիշկ-լաբորանտ Օվսաննա Խաչատրյանին:
3. Էդուարդ Դարբինյանին աշխատանքի մեջ համարել 2018 թվականի սեպտեմբերի 18-ից:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝** Недействительная подпись

X

VERIFIED OCSP 07.08.2018 14:28:16 GMT+4

Подписано: MIRIJANYAN GAGIK 2608810403

**Գ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆ**